

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

Մայիս 6-ին Մոսկւայում հրատարակւած է «Պորհրդ. Միութեան Պորհրդային Գրողների Միութեան Կանոնադիրը», կազմւած Համամիութենական Կոմունիստական Կուսակցութեան կողմից: Այդ կանոնադիրը այսուհետեւ պարտադիր է լինելու Պորհրդ. Միութեան մէջ մտնող բոլոր երկրների, հետեւաբար եւ Հայաստանի համար: Հայաստանի Գրողները իրաւունք չունին իրենց ուղած ձեւով, տեղական պայմաններին համապատասխանող կանոնադիր կազմելու. նրանք պարտաւոր են ապրել եւ զործել Մոսկւայի որոշումներով ու հրահանգներով:

Վերջին երկու տարին խորհրդային գրողները առաջնորդւում էին Համ. Կոմ. Կուս. Կենտ. Կոմիտէի 1932 թ. ապր. 23 որոշումով, որով, ինչպէս յայտնի է, լուծւած էին մինչեւ այդ դրութիւն ունեցող բոլոր կազմակերպութիւնները եւ կազմւած էին Համամիութենական եւ տեղական-հանրապետական միութիւններ: Այդ միութիւնները ղեկավարւում էին, այսպէս կոչւած, Կազմ. Կոմիտէներով, որոնց պաշտօնն էր վարել Գրող. Միութեան գործերը եւ հրաւիրել համագումար: Վերջինս մի քանի անգամ նշանակեց եւ յետաձգեց, որովհետեւ մի կողմից խորհրդային իշխանութիւնը չէր գտնում գրողների եւ գրականութեան ղեկավարութեան վերջնական ձեւը, միւս կողմից՝ գրողների շարքերում չէին վերջանում «պաղատարական թերութիւններ» ու «խմբակային զրգրութիւն»: Վերջին որոշումով գրողների համագումարը նշանակւած է եկող յունիս 25-ին: Այդ տեղ պէտք է վաւերացիւ եւ վերոյիշեալ կանոնադիրը, մի բան, որ սոսկ ձեւականութիւն է. նա արդէն ուժի մէջ մտնած օրէնք է:

Նոր հրատարակւած կանոնադիրը նախորդում եւ օրէնքի տակ է դնում խոր-

հրդային գրողի եւ ստեղծագործութեան բոլոր կողմերը: Այդ կանոնադրով կարգադրւում է, որ «բոլոր կազմակերպները անմիջապէս ձեռնարկեն գրողների անդամագրութեան՝ համաձայն հրատարակող կանոնադրի եւ մինչեւ 1934 թ. յունիս 10 վերջացնեն անդամագրութիւնը»:

«Պորհրդային գրողների միութիւնը հանդիսանում է կամաւոր կազմակերպութիւն», աււած է նոր կանոնադրի մէջ, այսինքն՝ գրողները պէտք է իրենց յօժար կամքով որոշեն միութեան մէջ մտնել-չմտնելը, սակայն եթէ յիշենք այդ «կամաւորութեան» հետեւանքները, կը տեսնենք, որ միութիւնից դուրս մնալը գրողի համար բացարձակ անկարելիութիւն է: Նա ով չի մտնի միութեան մէջ, կը զրկուի պետական եւ այլ խանութներից մթերք ստանալու իրաւունքից, նրա երկիրը չեն հրատարակի պետական հրատարակչականների կողմից եւայլն. իսկ որովհետեւ Պորհրդ. Միութեան սահմաններում մասնաւոր խանութ կամ հրատարակչական չկայ, միութեան անդամ չեղող գրողը պիտի դատապարտուի սովամահութեան եւ անգործութեան: Բնական է, միութիւնից դուրս մնացող չի լինի, որով «կամաւորութիւնը» կը մնայ լոկ անրովանդակ խօսք՝ յատկացւած արտաքին աշխարհի միամիտների համար:


Ի՞նչի է ձգտելու Պորհրդ. Գրողների Միութիւնը: «Պորհրդ. Գրողների Միութիւնը ընդհանուր նպատակ է գնում ստեղծել բարձր գեղարւեստական արժէք ունեցող երկեր, որոնք լինեն յաղեցած միջոցառող լայն ընթացքով հերոսական պայքարով, սոցիալիզմի յաղթանակի պաթոսով, որոնք արտացոլեն կոմունիստական կուսակցութեան մեծ իմաստութիւնն ու հերոսութիւնը»:

Գործնականում այս ընդհանուր ուղեգիծը արտայայտուելու է նրանով, որ

«Գրական շարժումը սերտ եւ անմիջական կապ պիտի պահէ կուսակցութեան եւ խորհրդային իշխանութեան քաղաքականութեան օրւայ դործօն խնդիրներէ հետ, զբողները պէտք է մտցնին սոցիալիստական շինարարութեան դործնական աշխատանքներէ մէջ»։ Ուրիշ խօսքով, գրական ազատ ստեղծագործութիւնը ենթարկելու է կոմունիստ. կուսակցութեան խիստ հակակշիռ ու ղեկավարութեան եւ զբողը դառնալու է կուսակցական եւ կառավարական պաշտօնակայ։ Նրանից պահանջելու է լինել հլու կամակատար իշխանութեան եւ անտրբտունջ կատարել վերից եկող բոլոր

հրամանները։ Զենթարկւողներէ համար սահմանում է յատուկ պատիժ՝ արտաքսում միութիւնից. «Խորհրդ. Գրողներէ Միութեան անդամակցութիւնից հեռացնելը կատարուում է վարչութեան քարտուղարութեան վճռով»։ Միութիւնից կարտաքսւի եւ նա, ով միտարւայ ընթացքում գրական «պրոգուկցիա» չտայ, այսինքն՝ որեւէ երկ չարտադրէ։

Ինչպէս ասացինք, այս օրէնքը պարտաւորեցուցիչ է եւ Հայաստանի համար։ Հայ մշակոյթը եւ, ի մասնաւորի, գրականութիւնը, սրանով ենթարկուում են մի նոր եւ չատ ծանր փորձութեան։



Ղ. ԱՂԱՅԵԱՆԻ ԱՆՅԱՅՏ ՈՏԱՆԱՒՈՐԸ

Երեւանի «Գրական Թերթ»-ը (20 փետր.), Թիֆլիսի 1911 թ. «Մամուլ» օրաթերթի № 6-ից առնելով, հրատարակել է Ղազարոս Աղայեանի մինչեւ այժմ անյայտ մնացած հետեւեալ ոտանաւորը-

ԳԼՈՒԽ ԹԷ ԳԼԽԱՐԿ

(ՆԻԷՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻՆ)

Երբ որ ընտրութեան լինէ՛ք ձեռնամուխ, Դուք գլխարկ կընտրէ՛ք եւ ոչ քէ գլուխ, Ի՞նչ է վեղարը, եթէ ոչ գլխարկ, Որ պարփակում է մի գլուխ դատարկ։ Կուգե՛ք ընտրեցէ՛ք մի աշխարհական, Թող լինի անգամ մի մեծ գիտնական, Բայց չէ՞ որ նա էլ վեղար պիտ կրի, Եւ ինչ որ սեւ է, նրան համակրի։ Ուրեմն, էլ ի՞նչ հարկ մտմտալ ի գուր, Թէ վեղարներէց որն է բուք կամ սուր։

Ինչպէս յայտնի է, Մակար կաթուղի-կոսի մահից յետոյ, Ղ. Աղայեանը թունդ կողմնակից էր Խրիմեանի ընտրութեան։ Այդ առթիւ էր, որ դրեց Խրիմեանի ներքաւ յայտնի ոտանաւորը՝ «Թո՛ղ բարձրացնեն ճոխնչադաղակ»։ Կաթուղիկոս ընտրելուց յետոյ, Խրիմեանը ծանր յուսախարութիւն պատճառեց իր պաշտօնըներին։ Ամենէն շուտ եւ հիմնովին հիասթափուողներից մէկը եղաւ Աղայեանը, որ անձնական կաշու վրա էլ ճաշակեց կաթուղիկոսի բացասական վերաբերումի հետեւանքները։ Անշուշտ, այս ոտանաւորը՝ գրւած նոր կաթուղի-կոսի ընտրութեան առթիւ արտայայտում էր տաւառութիւնները այդ հիասթափութեան։

